



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

26 հոկտեմբերի 2018 թ. № 144 - Ա/1
ք. Երևան

ՍԵՐԳԵՅ ՆԻԿՈԼԱՅԻ ԲՈՆԴԱՐԵՆԿՈՅԻՆ
«ԲԱՑԱՌԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ժ. 3» կետի՝ հրամայում եմ՝

1. Հայկական ֆուտբոլի զարգացման գործում մեծ ներդրում ունենալու, ձեռք բերած փայլուն նվաճումների և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Սերգեյ Նիկոլայի Բոնդարենկոյին պարգևատրել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Բացառիկ ծառայությունների համար» մեդալով:

2. Հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ Աննա Մխիթարյանին՝ հատկացնել «Բացառիկ ծառայությունների համար» 1 (մեկ) մեդալ, 1 (մեկ) վկայագիր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ